ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.17. Հարավարևելյան Ասիա: Աշխարհագրական դիրքը: Բնական պայմանները և ռեսուրսները

• • •

Տարածաշրջանը շատ բարենպաստ աշխարհագրական դիրք ունի, քանի որ կապող օղակ է ոչ միայն Ասիա աշխարհամասի տարբեր տարածաշրջանների միջև, այլև գտնվում է տարբեր աշխարհամասերի միջև օդային ու ծովային հաղորդակցության կարևորագույն ուղիների խաչմերուկում:

Աշխարհագրական դիրքի առանձնահատկություններից է նաև այն, որ տարածաշրջանը կազմված է երկու ենթատարածաշրջանից՝ մայրցամաքային (մայրցամաքի հարավարևելյան հատվածը) և կղզեխմբային մասերից: Մայրցամաքայինը ներառում է նաև թերակղզային մասեր՝ Մալակկա և Հնդկաչին, կղզեխմբայինը՝ Մալայան արշիպելագ (Մեծ և Փոքր Զոնդյան կղզեխմբեր, ավելի քան 17000 կղզի) և Ֆիլիպինյան կղզեխումբը (7083 կղզի): Բացի այդ, տարածաշրջանի մեջ է մտնում նաև Ավստրալիա և Օվկիանիա աշխարհամասին պատկանող Նոր Գվինեա կղզու արևմտյան մասը (պատկանում է Ինդոնեզիային): Կղզու արևելյան մասը զբաղեցնում է Պապուա-Նոր Գվինեա պետությունը:

• • •

Տարածաշրջանն ամբողջությամբ տաք ջերմային գոտում է՝ հասարակածային, մերձհասարակածային և արևադարձային կլիմայական գոտիներում: Հավերժական ամառների տարածաշրջան է, որտեղ կարելի է տարեկան երեք անգամ բերք ստանալ: Թեև հողակլիմայական պայմանները բարենպաստ են, սակայն տարածաշրջանը բավականին անտառապատ է, բնակչության թվաքանակը մեծ, ուստի բնակչության մեկ շնչի հաշվով տարածաշրջանը սակավահող է: Անտառներն աչքի են ընկնում թանկարժեք բնափայտ ունեցող ծառատեսակներով, դեղաբույսերով, որոնք մեծ պահանջարկ ունեն համաշխարհային շուկայում: Հարուստ է կենդանական աշխարհը:

• • •

Հարավարևելյան Ասիան արևմուտքում և հյուսիսարևմուտքում հարևան երկրներից բաժանվում է ոչ բարձր լեռնային համակարգերով, արևադարձային խոնավ անտառներով:

• • •

Հյուսիսում և արևելքում ափերը ողողում է Խաղաղ օվկիանոսը՝ իր **Հարավչինական** եզրային և **Ֆիլիպինյան** միջկղզային, ինչպես նաև կղզիների և կղզեխմբերի միջև գտնվող բազմաթիվ այլ միջկղզային ծովերով: Հարավից և արևմուտքից ափերը ողողում են Հնդկական օվկիանոսի և նրա մասը կազմող **Անդամանյան**, **Թիմորի**, **Արաֆուրյան** և այլ ծովերի ու Բենգալյան ծոցի ջրերը: Երկրներից միայն Լաոսն է, որ ներցամաքային է, բայց Մեկոնգ նավարկելի գետով դուրս է գալիս Խաղաղ օվկիանոս (**Հարավչինական ծով**):